Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ի Ց

18 փետրվարի 2016 թվականի N 6

---

26. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի ՆԻՍՏԻ N 38 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 17-ՐԴ ԿԵՏՈՎ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 13-ի նիստի N 38 արձանագրության 17-րդ կետով հավանության արժանացած «Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ռազմավարությանը և ֆինանսավորման ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) 1-ին կետի երկրորդ պարբերության առաջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1233-Ն որոշմամբ նախատեսվել է ՊՄԳ-ի պայմանագրերի գործողության ժամկետների երկարաձգում՝ մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը:».

2) 21-րդ կետի 1-ին ենթակետում «սկսած 2016 թվականից» բառերը փոխարինել «սկսած 2017 թվականից» բառերով.

3) 30-րդ կետի 1-ին ենթակետում «2016 թ. հունիսի 1-ից» բառերը փոխարինել «2017 թ. հունվարի 1-ից» բառերով.

4) 4.1-ին աղյուսակի՝

ա. 2-րդ կետի 2.1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

2.1.	ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի N 883-Ն որոշման համապատասխան դրույթների իրականացման նպատակով նախապատրաստել առաջարկություն լրիվ ինքնաձախսածածկվող սակագնին անցման փուլի տևողության և ձևի վերաբերյալ՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության ֆինանսական աջակցության և առկա վարկերի պարտքի սպասարկման մակարդակները:	ՋՏՊԿ ՀՀ ֆինանսների նախարարություն	2016 թ. հուլիս	ՀՀ կառավարության 14.08.2014 թ. N 883-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի դրույթների իրականացման ապահովում

»,

բ. 2-րդ կետի 2.2-րդ, 2.3-րդ, 3-րդ կետի 3.1-ին, 4-րդ կետի 4.3-րդ և 5-րդ կետի 5.5-րդ ենթակետերի «Կատարման ժամկետ» սյունակում «հունիս 2016 թ.» բառերը փոխարինել «հունվար 2017 թ.» բառերով,

գ. 3-րդ կետի 3.2-րդ ենթակետի «Կատարման ժամկետ» սյունակում «հունիս 2017 թ.» բառերը փոխարինել «ապրիլ 2018 թ.» բառերով,

դ. 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.3-րդ ենթակետով,

«

3.3.	ՋՏՊԿ-ի կողմից գույքի արդյունավետ կառավարման և վերահսկողության ապահովում	ՋՏՊԿ	2016 թ. շարունակական	ՋՏՊԿ-ում գույքի կառավարման և վերահսկողության համակարգի զարգացում և արդյունավետության բարելավում

»,

ե. 4-րդ կետի 4.1-ին ենթակետում «Կատարման ժամկետ» սյունակում «հունիս 2017 թ.» բառերը փոխարինել «ԿՀՑ-ների կատարման վերաբերյալ հաշվետվությունն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում» բառերով,

զ. 4-րդ կետի 4.4-րդ ենթակետի «Կատարման ժամկետ» սյունակից հանել «հունիս» բառը,

է. 5-րդ կետի 5.1-ին, 5.2-րդ, 5.3-րդ և 5.4-րդ ենթակետերի «Կատարման ժամկետ» սյունակից հանել «հունիս» բառը.

5) 4.2-րդ աղյուսակի՝

ա. 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«	2.	1) Խմելու ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների, լիցենզավորված անձանց և բաժանորդների միջև կնքվող՝ խմելու ջրամատակարարման կամ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերի կամ պարտադիր պայմանների սահմանում	ՀՀ ջրային օրենսգրքում կատարված համապատասխան փոփոխություններից և լրացումներից բխող պահանջների ապահովում	ՀԾԿՀ	2016 թ. դեկտեմբեր
		2) ՀՀ կառավարության 2004 թվականի հունվարի 22-ի N 130-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու (կամ փոփոխություն կատարելու) վերաբերյալ առաջարկություն ներկայացնելը	ՀՀ ջրային օրենսգրքում կատարված համապատասխան փոփոխություններից և լրացումներից բխող պահանջների ապահովում	ՋՏՊԿ	2016 թ. դեկտեմբեր

»,

բ. 3-րդ կետի «Կատարման ժամկետ» սյունակում «2015-2016 թթ.» բառերը փոխարինել «2016-2017 թթ.» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թ. փետրվարի 23
Երևան